

284  
ԼՇՈՏ ԳՐԱԾԻ 1

ՄԱԶՄԻ

ԲՆԱՐ

ԱԶԵՐՆԵՇՐ - 1942թ.

22977

Փրակ.

Կարճ քեր.

017-01-01-01-01

ԱՇՈՏ ԳՐԱՇԻ

~~20087~~

Ռ.Ա.ԶՄԻ ՔՆԱՐ

5563

A  $\frac{I}{9495}$

~~4087~~



Ա. Զ. Ե. Բ. Ն. Ե. Շ. Բ.

Քաղաքական գրականության բաժին

Բաբու — 1942

Պատ. խմբագիր՝ Հ. ԱՄԻՐՆԱՆՅԱՆ



Ստորագրված է ապագրույթյան 15/1 1942 թ.  
2<sup>3</sup>/<sub>8</sub> տպ. թերթ, 1 տպ. թերթ. 62,016 տպ. նշ., 3<sup>3</sup>/<sub>4</sub> հեղ. թերթ.  
ՁԴ 35. Եկեղեցիի Պատվեր № 3959. Տիրաժ 2000  
Տպարան «Կրասնի Կաստիլ», Պիոների փողոց, № 80.



## ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՐՏԻ ՄԱՏՅԱՆՈՒՄ

Մարտ է բախտորոշ ու սրտաընդոստ,  
Այելի լավ է կորցնես բազում ոստ,  
Քան՝ կյանքիդ ծառը, ով իմ ժողովներդ,  
Քո փառքին վայել մարտնչիք ըմբոստ:

## ԵՍ ՓՈԹՈՐԻԿՆ ԵՄ ԵՐԳՈՒՄ ՓՐԿԱՎԵՏ

Ահեղ մարտերի երգիչը բոցուն  
Գոռ, փոթորկաբեր ամպրոպն է սիրում,  
Երբ մռթ երկնքի ամպե դարբնոցում  
Նույ կայծակները թրերն են սրում:

Երբ հոժ թուխպերը՝ հանց զորք անքանակ,  
Պղտոր անհունի անծայր դաշտերով  
Ճակատ են սուբում անթիվ վաշտերով,  
Գրոհի գնում բանակ առ բանակ:

Երբ տարածվում է որոտքն ահարկու,  
Հրետանին է երկնի գլրդում,  
Համազարկերն են հզոր ահագնում,  
Եվ սոսկավիթխար շանթերն են ճայթում:

Անձրեվի հեղեղն հաղարատարափ  
Հանց ռազմադաշտում թափվող հորդ արյուն,  
Գահավիթում է հախուն, վարարուն,  
Ողողում լեռներ, հովիտներ, քարափ:

Գազար է առնում հեղեղը, հետո  
Նազաղությունն է ծավալվում կապույտ  
Եվ ծխածանն է երփներագ գոտով  
Երկնով ցնծության կամուրջը կաղում:

Եվ արեգակը՝ հազին ծիրանի,  
Հանց ազատության մանուկը լուսաչ,  
Խաղում է խորքում երկնի վրանի  
Ու ճառագայթում ժպիտ ու ճաճանչ:

Ես փոթորիկն եմ երգում փրկավետ,  
Թող պայթի ամպրոպն անեղ վրեժի  
Եվ շանթահարի, այրի առհավետ  
Ողջ վտառները Հիալեր հրեշի,

Որ առմիշտ մաքրվեք, անապականաք,  
Օդ ապականված, ջրեր պղտորված,  
Որ ազատ հողում ծուփով բարձրանաք,  
Հասկեր մոխրացած, ծիլեր տրորված,

Որ հավերժ հնչես դու, հստակարուխ  
Աղբյուր—մայրենի երգ հրաշալուր,  
Որ երթիկներից, հայրենական ծնւխ,  
Հավիտյան ծիաս դեպ եթերը լուրթ,

Որ խաղաղության ասաղերի ներքո  
Դու հավետ մնաս անվիշտ, երջանիկ  
Հայրենիք, զովված բյուրավոր երզով—  
Ժողովուրդների դու հաշտ ընտանիք:

Ես փոթորիկն եմ երգում փրկավետ,  
Պայթիլը դու, ամպրոպ արդար վրեժի,  
Եվ շանթահարի, այրի առհավետ  
Ողջ վտառները Հիալեր հրեշի:

## ՌԱԶՄԻ ՔՆԱՐ

Որոտում են շեփորները մարտական,  
Հայրենական պատերազմի մեզ կանչում,  
Ես թողնում եմ իմ քնքշագին լիրիկան  
Եվ առնում քեզ, ազգմի քննոր շառաչուն:

Հախուռն երգիր մեծ Միության բազմահոծ  
Ժողովրդի հոգու ցասումն հրաբուխ,  
Հախուռն երգիր մեր դայրույթը ակեկոծ,  
Որպես հեղեղ ամենագոր, հորդարուխ:

Հզարտ երգիր մեր զորքի ուժն օվկիանոս,  
Սովետական մարտկոցները անվրեպ՝  
Ընդդեմ բոլոր վանդալների բարբարոս,  
Ընդդեմ բոլոր վիշապների մարդակերպ:

Ռազմի քննոր, երգիր բոլոր լարերով  
Ճախրանքները բազենների սրաթեվ,  
Որ թշնամու գլխին շանթեր տեղալով,  
Հրդեհում են նրա թունոտ որջը սեվ:

Հզոր երգիր հերոսներին դյուցազուն,  
Որոնք ազգմի դաշտով, օդով ու ծովով,  
Պատվի, փառքի դրոշներն են ծածանում  
Ստալինյան անհատնելի կորովով:

Ռազմի շեփոր, երգիր բարձր, պղնձաձայն  
Արդար ուղմը բոլոր արդար ուղմերի,  
Թող ունի դնեն քեզ և՛ ցամաք, և՛ օվկիան,  
Մեր հաղթության ծարավ ավերն աշխարհի:

Ռազմի քնար, նվագներով զուշակիր  
Մահն անխուսափ խելացնոր Հիալերի,  
Գերեղմանիւր նրան, հզոր իմ երկիր,  
Ոնց թաղեցիր Բոնապարտին ամհհի:

Ռազմի շեփոր, հնչեցրու զրնգուն  
Նվագները դափնեպսակ գալլիքի,  
Հավատում եմ նրան հողով աննկուն,  
Հավատում եմ ես մեծպոր մեր զենքին:

## Բ Ա Ր Ի Ե Ր Թ

Սրտիս խորքում զսպում եմ  
Արցունքներս, չեմ լալիս,  
Առանց լացի եմ ճամբում  
Ես պատերազմ իմ բալիս:  
Կանաչ, կարիճ իմ որդի,  
Ես ճամբիդ չեմ հեկեկում,  
Որ թշնամին չտեսնի  
Արցունքի ցող իմ աչքում:  
Կանաչ, կարիճ իմ որդի,  
Անվախ գնա դու մարտի:  
Գնա էնպես կռիվ տուր,  
Որ թշնամու մերը լա,  
Էնպես կռվի, որ մեկ էլ  
Կռիվ չգա մեզ վրա:  
Օձը երբ որ տաքանա,  
Գլուխը դուրս կհանի,  
Որդի, վատ է սեվ օձից  
Մեկսիրտ, սեվթուշն թշնամին:  
Կանաչ, կարիճ իմ որդի,  
Գնա իժին դու ջարդիր:  
Դու իմ միակ որդին ես,  
Դու իմ միակ զավակը,

Քո հարազատ եղբայրն է  
Ամբողջ կարմիր բանակը:  
Նա քեզ մարտի գնալիս  
կպահպանի եղբոր պես,  
Դու էլ, անդու իմ բալես,  
Զխնայես երբեք քեզ:  
Եղիք նրան թե՛վ, որդի,  
Յոթ սարի ետե՛վ, որդի:

Ով կտրի՞ճ է, ով անահ,  
Նա է կռվում միշտ հաղթում,  
Մեր քաջ Դավթի մոր նման  
Քաջությունն հմ քեզ մաղթում:  
Ես օրհնում եմ էն սուրը,  
Որ Ստալինն է քեզ տալու,  
Դալար մնա քո կուռը՝  
Էն սուր թուրը կրելու:  
Կանաչ, կտրի՞ճ իմ զավակ,  
Գնա՛ գեպի հաղթանակ:

Գնա՛, քեզ հետ գալիս է  
Քո հարսիկը զեղանի,  
Թե վերք ստանաս, քո վերքին  
Նա կդնի սպեղանի:  
Հաղթանակով դուք կգաք,—  
Պսակի շոր կկարեմ,  
Ճերմակ վարսիս կարմիր քող,  
Զեր հարսանքում կպարեմ,  
Բարի երթ, իմ որդիներ,  
Զեզ էլ, ձեր կուռ երթին էլ:

## ԱՆՄԱՐ ԱԶՔԵՐ

Մի վերավոր կարմիր մարտիկի, որը  
վճռականորեն հրաժարվում էր պատաս-  
խանել ռազմական ընտելթի հարցերին,  
Փաշխատ սպայի հրամանով ձեռքերը  
կտրել են եվ աչքերը հանել:

(ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑՈՒՐՈՅԻ  
ՀՈՒԼԵՍԻ 12-Ի ՀԱՂՈՐԴՈՒՄԻՅ):

Մեզ հորդաները հիալերյանների  
Մեզ ավիաներով աչքերն են փորում  
Գերված մեր մարդկանց, մեր զինվորների:

Նրանք փորում են այն աչքերը լույս,  
Ուր ցուցվում եք, իմ հայրենիքի  
Լճակներ փիրուզ, երկինք աստղահյուս:

Նրանք փորում են այն աչքերն անխառ,  
Ուր ծփում էք դուք, արտեր, այգիներ,  
Դուք իմ հովիտներ չքնաղ, չնաչխարհ:

Նրանք փորում են աչքերն այն բերիլուռն,  
Որոնք տեսել են պայծառ բախտն իրենց  
Մեծ Ստալինի պայծառ հայացքում:

Նրանք հանում են աչքերն այն վճիտ,  
Որ երջանկության պարտեզներն մեջ  
Ձեն տեսել երբեք արատաուքի շիթ:

Նրանք հանում են աչքերն անարատ,  
Որ հավետ լի են, հավատ լենինյան,  
Քո հույզով, հույսով ու լույսով առատ:

Կուրացնում են աչքերն արծվենի,  
Որ միշտ նայել են, հսկել են արթուն,  
Քո եղերքները, երկիր հայրենի:

Մութով են լցնում աչքերն այն հստակ,  
Որ ժպտում էին ծաղիկների պես  
Ծաղիկանոց՝ երկրիս արեգակի տակ:

Բայց ով մի անգամ արել է տեսել,  
Նրա աչքերը, խավարամոլներ,  
Ոնց էլ խավարեք, կմնան լուսի:

Անկար եք ջնջել սրով, սվինով,  
Ինչ որ գրվել է մեր աչքերի մեջ  
Մեծ ճշմարտության ոսկե վրձինով:

Մենք ձեզ նայում ենք ժողովրդական  
Արդար վրեժի, ցասման աչքերով,—  
Դժոխք է սպասում ձեզ դանթեական:

Իսկ մեր աղագան պայծառանշույլ  
Աչքերով ամբողջ աշխարհի վրա  
Կշողն, իբրեւ անմար աստղաբույլ:

Խավարի ծնունդ խավարամոլներ,  
Լսեք, պոետը հեռատես գուշակ  
Ձեզ գուշակում է խավար շիրիմներ,  
Հավետ նղովված ու անհիշատակ:

## ԲԵԼՈՌՈՒՍԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿ

Այստեղ կանգնած էր մի ճերմակ գյուղակ,  
Ծառախմբերով շրջապատված,  
Երթիկներիցը ծուխն օղակ-օղակ  
Ծփում էր դեպի երկինքը բաց:

Ջինջ մանուկները զվարթ երամով  
Ջուկ էին որսում, առած կարթեր,  
Վրանի տակին ոլորտների մով  
Սլալում էին անափ արտեր:

Եվ հազած հարսի շորեր ծաղկավոր,  
Այգում ժպտում էր կեռասենին,  
Եվ օրորվում էր մտերիմ ու խոր  
Ականջը առլի արծաթ ձենին:

Սազերը ճերմակ ամպերի նման,  
Անարատ, անդորր, անվիշտ գետում  
Լողանում էին խինդով անսահման,  
Նախիրն էր հածում կանաչ հովտում:

Թավ կեչիներն զրկում զովաշուք,  
Բլուրի լանջին մի գեղանի,  
Պաղ հողմերի հեռ խոսում էր անհող  
Հողմադացն՝ արծիվ երկթեկանի:

Բարդենիների դագաթին անհաս  
Հովիկն էր պարուժ բույրով ծածան,  
Վճիտ էր կյանքը, ոնց մանկան երազ,  
Երփներանդ, ինչպես մի ծիածան:

Սպանդի թաթը ողջը ավերեց  
Շրապնեղների շանթ բոցերով,  
Անարգ սսոխը ողջը ավարեց,  
Ու մոխիր ցանեց շեն դաշտերով . . .

Բերեղինայի ջրերը անամոլ  
Վրդովեց արկով ու ականով,  
Հողն օծեց անմեղ մարդկանց արյամբ  
Եվ ապականեց օդը թույնով:

Բելոռուսիա, հարազատ երկիր,  
Ուխտեղ ես առնել վրեժ անհուն,  
Հանուն քո կյանքի, հանուն երգի  
Եվ դավակների քո լուսանուն:

Քաջ ժողովուրդըդ, որպես վիթխարի,  
Հավերժ համերաշխ ու կուռ անտառ,  
Այս ամպրոպային, մրրիկ օրերին  
Ճակատամարտ է մղում արդար:

Եղբայրական հնդ, կռվին քո վառման  
Դափնե հաղթանակ, փառք արեվոս,  
Կովիր ու փյունիկ թռչունի նման  
Մոխիրից հառնիր մի առավոտ . . .

## ՀԱՅՐԵՆԻ ԾԱՌ

Խրճիթի առջև ծփում էր ծառը  
Գեղեցիկ, վերձիգ ու բազմատերեվ,  
Երկինք էր հասնում նրա կատարը,  
Նմում էր նա քո շողերը, արևի:

Ճյուղերի վրա ճովողում էին  
Թռչուններն ուրախ, կանաչ զարուհքի,  
Զովիկ շվաքում միշտ խաղում էին  
Մանուկները շեկ՝ նման հասկերի:

Ծառը ումբահար արեցին նրանք,  
Տաղավից գետին նա որպես մի զի  
Եվ ածուխ դարձավ՝ թեվերին կրակ,  
Աչքերում մահը ճերմակ խրճիթի,

Եվ մանուկների այն լուսազանգուր,  
Որ խայտում էին իրա շուքերում  
Ու շողում ինչպես աստղերը մաքուր  
Անամպածրար երկնի ծալքերում:

Բեղութուն առավ իր հրացանը  
Եվ սրտում ել ոխ, ել դայրույթ անանց,  
Բռնեց անտառի ծանոթ կածանը, —  
Քանի կենդան է չի ների նրանց:

Քանի կենդան է քաջ պարտիզանը,  
Գարշ հրձիգներից վրեժ կհանի,  
Որ մոխրից հառնի հայրենի տունը,  
Հայրենի ծառը՝ դալար հովանի:

Վրեժ մեր կյանքի ծառերի համար,  
Մեր մարդկանց համար և հարազատ տան,  
Մեր երկրի համար, որ հայր է ու մայր  
Ժողովուրդների և իմ խնդուլժյան:

## ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ՍՈՆԵՏՆԵՐ

### 1. ՄԻ ԲՈՒՌ ՀՈՂ

Հայրենիքից հեռանալիս Շոպենին  
Ընկերները, իբրեւ նվեր մի անգին,  
Հայրենական հովտից հուշով քնքշազին  
Սափորի մեջ մի բուռի չափ հող բերին:

Եվ Շոպենը սրտում վիշտը անմեկին,  
Իեզերելով բազում քաղաք, բազում հող,  
Պահպանում էր ու պաշտում էր մի բուռ հող,—  
Այնտեղ տեսնում հայրենիքը կաթոզին:

Տիեզերական երաժիշտը նվազով  
Ե՛վ սրտալուր, ե՛վ նրբենի, ինչպես հով,  
Ազնիվ թախիժն, ազնիվ սե՛րը երգեց,

Եվ այն մի բուռ հողը, որ իր հողն էր մեծ,  
Եվ երբ մեռավ օտար երկնի տակ անշող,  
Իր աճյունին պսակ հղավ մի բուռ հող:

2. ՊՈՒՇԿԻՆ ԵՎ ՄԻՑԿԵՎԻՉ

Ազատութեան երկու երգիչ սրտագործով,  
Սլավոնական երկու հանճար արեգական,  
Դուրս են եկել շիրիմներից վսեմական  
Եվ շրջում են մուխ նեվայի եղերքներով:

— Ազատութիւնն փայփայեցինք մեր երգերով,  
Գուշակեցինք սերունդների լույս ապազան,  
Եվ նա եկավ մրրիկներով հերոսական,  
Սարկութեան շղթաները թոթափելով:

Արդ, մեր ցեղի ախոյանը հին, վաղեմի,  
Մոլեգնում է կապանք դնել մեր ազգերին,  
Ե՞րբ է գերվել ազատ ոգին սլավոնի:—

Բարձրանում են, նման անանց անտառների  
Ազատութեան զորազնդերն արդարամարտ,—  
Նրանց հետ է մեր արշուճն ու երգը հպարտ:



Handwritten blue ink markings on the left margin, including a vertical line of characters and the large letters 'A 9495'.

### 3. ԱՆՆՈՒՍԱՓԵԼԻՆ

Հիտլերական հելուզակներ արնաթաթավ,  
Հեղեղ-հեղեղ դուք հորդում եք մեր մայր Ռուսիան,  
Մայր Ռուսիայի ստեպները լայն, անսահման  
Ներծծում են հեղեղները ձեր նենգազավ:

Հին դարերում նրանք տեսան անհուն, անբավ,  
Աշխարհավեր երամակներ թշնամական,  
Նրանց խորքում գերեզմանվեց Ոսկե հորդան,  
Մոնղոլական բանակները անհարշավ:

Հերթը այսօր ձերն է, իժեր, դուք հորձանեք,  
Հովիտներով ծավալվեցեք, արնով արբշխո,—  
Միայն այստեղ պիտի անդարձ դուք կործանվեք:

Միայն այստեղ, այս լայներում անձայրածիր,  
Պիտ ցամաքեն հեղեղները ձեր անպատում,  
Ոնց առուններ ավազանիտ անաղատում:



#### 4. ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Եվ հրդեհը ինչպես հազար զլխանի գեւ  
Գրազարանն առավ երախն իր ահռելի,  
Գրքերն, ինչպես կարապները ձերմակաթեւ,  
Հեծծում էին բոցերի մեջ զարհուրելի:

Հեծծում էին, հեծկլտում հազարահեւ  
Հուրերի մեջ եղեռնագործ հրձիգների,  
Վառվում էին ու մոխրանում ինչպես տերեւ  
Երկերն արեւ Տոլստոյի ու Հոմերի:

Պոեմները Միցկեւիչի, Լերմոնտովի,  
Գրկախառնված տերցիներին դանթեական,  
Այրվում էին, խոսում ինչպես ամբողջ մովի.—

- Մի ցնծացեք, բարբարոսներ գերմանական,  
Մեզ չի այրի ոչ մի հրդեհ մառ, ամենի,  
Բայց ձեզ, գիտցեք, սպասում է մահ գեհենի:

## 5. ԿՐՆՄԼ

Կրեմլ, Կրեմլ աստղապսակ ու հոյակապ,  
Աշխարհում ռը աշտարակն է քեզ չափ վսեմ,  
Վատանգների սլահին եղար դու անտագնասը,  
Տեսար մահը ոսոխների նենգ ու նսեմ:

Հողի տակ էլ թող հաղթական քայլքդ լինն,  
Սարսեն նրանք քո զարկերից անագնաթափ  
Եվ չերագեն քեզ զբավել, ամբոց լուսե,  
Սերունդների հերոսության անառիկ սփ:

Ճերմակաքար մայր Մոսկվայի փնռք երկնասույզ,  
Յուրաքանչյուր աղյուսը քո վեհ է և սուրբ,  
Հանց Լենինի դամբարանը մարմարահյուս:

Քո աստղերից սուտակեղեն, հավերժարորբ  
Ճառագում է անմար լույսը Ստալինյան,—  
Ողջ ազգերին նշում ուղին ազատության:

## ՎԻՐԱՎՈՐԻ ԵՐԱԶԸ

Ես երազում խաղում էի մանկության  
Անտառային լճակի մոտ երկնամով,  
Կեչիները զուգել էին իմ ճամբան  
Ոսկեփետուր տերեւների երամով:

Շուշանների սափորներով սպլտակ  
Ես ջուր էի խմում լճից հայրենի,  
Կաթի նման ջուրն անուշ էր ու հատակ,—  
Հրճելում էր հողիս, ինչպես աղափսի:

Խնդությունից քույրիկ էի ես կանչում  
Աշնան հովին, որ մազերն էր իմ շոյում,  
Խարայաչ կեչին ինձ եղբայր էր շշնջում,  
Մանկան նման ցնծում ոսկե շորերում:

Դղրդյունով հրեաանու ահավոր  
Ես արթնացա երազներից լուսավառ,  
Խրամատում պառկած եմ ես վերավոր,  
Աչքերիս մեջ մահվան մշուշ ու խավար:

Կեչիների պերճ անտառը ոսկեպար,  
Իմ մանկության օրորոցը հողեթով,  
Սուգ է անում հրդեհներում մութ ու մառ,  
Ծածկվում տխուր մոխիրների կույտերով:

Կարծես նա էլ հրձիգների զեմ հրեշ  
Մահանալով աղաղակում է վրեժ:

## ԴՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՔՈՒՅՐ ՀԱՎԱՏԱՐԻՄ

Ծիծղուն ցնծում էր ծաղկածով մարզը  
Հինավուրց Դնեպրի խաղաղ եզերքին,  
Տրորեց տանկը, ավերեց արկը  
Ծաղկածով մարզը չքնաղ եզերքին:

Անդորր ննջում էր ըմբոստ գուսանը  
Գարնանաշքեղ բլլի գագաթին,  
Շիրմին բացվում էր ամպե շուշանը,  
Ուրախ ծփում էր սպիտակ բարդին:

Ոսոխն անարգեց երգչի շերիմը,  
Ոսկե Ուկրաինան արավ ոտնատակ,  
Դնեպր, մռնչն վրեժի հիմնը՝  
Ահեղաշառաչ, ինչպես ծոփն անտակ:

Դնեպր, մռնչն ու ալեկոծվիր,  
Դուրս եկ ափերից քո թշնամակոխ,  
Հեղեղիր բոլոր բները օձի,  
Մի թող նա պղծի ջուրդ լուսաշող:

Մի թող քո որդոց արյունով օձի  
Քո եզերքները ոսոխը լպիրշ,  
Մի թող թշնամու արյունաշուրթ ձին  
Վիշապի նման սուրբ ջուրդ ըմպի:

Օ՛, ուկրաինական ստեղծերի մայր,  
Դու ազամանդե բարբառով կանչիր  
Գո զավակներին անթիվ, անհամար,  
Թող նրանք հանեն սուրբ մահավճիռ

Ոսոխի համար՝ ծնունդ գեհնի,  
Մատնիչի համար չար, հայրենադավ:  
Ինչպես ջրհեղեղ, ինչպես մի թաթավ  
Դնեպը, հեղեղիբ նենգ ծովահենին:

Դաժան թշնամին քո հնամենի  
Ոտքիդ գրեւ է կապանք ու շղթա,  
Թոթափիբ շղթադ, հեղեղ հայրենի,  
Թոթափիբ, կրկին աշխարհին ժպտա:

Վայել է, միթե, որ լինի գերի  
Մայրն ազատասեր խրոխտ Տարասի,  
Մայրը Շչորսի կուռ, անպարտելի,  
Մայրը Բոզդանի քաջ ու քաջասիրտ:

Նրանց սրբազան աճյունները ողջ  
Վրեժխնդրության խոսքն են բարբառում,  
Թնդում է նրանց ձայնը մարտակոչ  
Մայր Ուկրաինայի հարթություններում:

Այն ազատատենչ ձայնին ունկնդիր,  
Հառնում են ահա բազում զորագունդ,  
Շարժվում են ահա բանակներն ընտիր,  
Պարտիզանական զնդեր ահարկու:

Սլավոնական գետերը բոլոր  
Խառնվում են իրար, Վիսլայից մինչեւ

Դունայը վրդով, ու վոլգան ոլոր,  
Մինչ Բերեզինան ծփուն, հողմահեղ,

Մինչ սահանքները քո հեղեղակոծ,  
Դնեպը, սլավոն հորդ գետերի քույր,  
Ծփն ծովի պես, մղիւր քո որդոց  
Հաղթանակների, փառքի կենսաբույր:

Ե՞րբ ես դու գլուխ թեքել օտարին,  
Որ այսօր թեքես, ահեղավազ գետ,  
Դու ազատության քնչը հավատարիմ:  
Ազատությունը քեզ հետ է հավետ:

## ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

Ամենից առաջ ուղարկեմ եմ ես,  
Ուր էլ որ լինեմ, հայրենի հող,  
Անձնուրաց հերոս Չապայեվի պես  
Կապաշտպանեմ քեզ կրծքով անդող:

Երկիր, քեզնից ենք անհուն ուժ առնում,  
Խնչպես էն հակա Սվյատագոր,  
Որ բազուկներում հողի ուժն անհուն  
Հաղթեց բյուրավոր թշնամու գոռ:

Դու ես ինձ սնել մայրական կաթով  
Եվ ես երգվում եմ այս վեհ սլահին,  
Կռվել ու հաղթել քո սուրբ հավատով,—  
Ոսոխին նետել վիհը մահի:

Երբեք չես լինի դու ոտքի կոխան  
Շուն Ֆաշխատների հորդանների,  
Միշտ ալ դրոշներ պիտի փողփողան  
Բո ազատածուխի սահմաններին:

Հավետ Ստալինի պայծառ անունը  
Պիտի մեր ուղին վառ փարոսի,  
Չենք թողնի, որ մեր ծաղկուն գարունը  
Տրորի սև ձին բարբարոսի:

Հայրենիք, Ստալինը հաղթանակն է մեր,  
Նրա հետ չկա մեզ պարտութուն,  
Կովենք աներեր, կովենք անվեհեր  
Ժողովրդական արդար մարտում:

Իմ ջահել արյան ամեն մի ցողով  
Երգվում եմ ես քեզ, հոգ հայրենի,  
Երգվում եմ Շչորսի շիրիմի հողով  
Միշտ լինել որդին քո արժանի:

Ամենից սուաջ ռազմիկ եմ ես,  
Թեկուզ և լինեմ սրախողխող,  
Անձնուրաց հերոս Չապայևիլի պես  
Կպաշտպանեմ քեզ կրծքով անպոչ:

## ԱՐԾԻՎ ՕԴԱԶՈՒՆ

Քաջարի օդաչու Հ. Ա.Լ.ԻՆՎԻ հիշատակին:

Երբ նա եղել է դանդուր պատանի,  
Աղաջնիկներ է պահել կապուտակ  
Եվ երազել է դառնալ աղաջնի,  
Թռչել ամպերում թեթև, սպիտակ:  
Աղաջնիկները բարձր տանիքից  
Նա թռցրել է ոլորտը մավի,  
Նայել է նրանց կարոտով անբիծ  
Եվ երազանքով հակինթ հարձուլի:  
Աղաջնիկները ճախրել են օդում  
Ու թափահարել թաշկինակ թեվեր,  
Ապա իջել են ոլորտներից առն  
Ու նրա թիկնեղ ուսերին նստել:  
Գզվել է նրանց հախուռն հրճվանքով,  
Փիրուզ աչքերը սրտանց համբուրել,  
Աղաջնիկները մեզմ գվզվանքով  
Նրա ափի մեջ հատիկ են կերել:  
Հետո նա նրանց դրել է վանդակ,  
Զինկոմխաարիատ տարել բոլորին,  
Նվիրել սիրով ու խինդով անառակ  
Մեր սահմանապահ քաջ զինվորներին:  
— Առեք թեվավոր իմ զինվորներին,  
Որպես փոստատար կտրիճների խումբ,  
Միայն խնդրում եմ, կոմխաար քեռֆ,

Ինձ ուղարկեցե՞ք դուք այրոտկումը:  
 — Ես փափագում եմ դառնալ օղաչու,  
 Մանուշակամով երկնի կամարում  
 Սավառնել, ինչպես թեփաբախ թռչուն,  
 Աղափսիներն են ինչպես սավառնում:  
 Եվ նա՛ պատանին չքնաղ Հարավի  
 Հասել է մի օր իր երազանքին, —  
 Թռել է երկնի ոլորտը ծավի,  
 Նման հեքիաթի խիզախ Իկարին:

\* \* \*

Առաջին թռիչք, սրտի առաջին  
 Թրթրու թեփավոր, անասի խնդություն,  
 Երկինքը, ինչպես հարազատ մի տուն,  
 Իր զիրկն ընդունեց ջահել կտրիճին  
 Եվ կարծես ասաց. — բաց են քո առաջ  
 Իմ կապույտների լայներն ընդարձակ,  
 Օղաչուններին արի, համարձակ  
 Երկյուղալի չեն մըրրիկ ու շառաչ:  
 Օրհնում եմ ես քո գալուստը, որդի,  
 Մորից ծնվել ես թռչելու համար,  
 Լույս օվկիանում մետաքսե օդի,  
 Շողմն եթերում արեվակամար:

\* \* \*

Արի օղաչուն մովում եթերի  
 Դանի սխրալի թռիչք կատարեց,  
 Երբ նայեց բարձրիկ սարի կատարից,  
 Գովերգեց նրան արքան հավքերի.  
 — Դնւ ես երկնքի տերն, — արծիփն ասաց, —  
 Ես քեզ եմ զիջում իմ գահն արքենի,

Մտավառնիր հավետ լայն թեկերդ բաց:  
 — Արդար ես, արծիվ, — ասաց աղափնին:  
 Թոչող պատանին հարազատ երկնում՝  
 Իր թռիչքներից ուրախ ու գինով՝  
 Վեհ բարձունքների վեհ հիմն էր երգում.  
 — Երգվում եմ ես ձեզ, հայրենական մոլ,  
 Հայրենի արտեր վարում ծփացող,  
 Հայրենի հավքեր, հովեր հայրենի,  
 Խոտերին իջած դարնանային ցող,  
 Եվ քեզ, արեգակ, գլխիս հովանի,  
 Մարտերում լինել արի և տոկուն,  
 Հայրենի հողի համար մարտնչել  
 Իսկ թե հարկ լինի՝ գնդակն իմ կրծքում՝  
 Հերոսի մահով գերեզման իջնել:

\* \* \*

Ռազմի երգումն հանդուգն սրտում,  
 Պատերազմ սուբաց օղաչուն ջահել,  
 Հոգում վառվում էր բոց ատելություն,  
 Վրեժն էր այնտեղ բորբոքում ջահեր:  
 — Դուք սողուններ եք, Ֆաշիստներ դժնի,  
 Ի՞նչ ունեք կապույտ բարձունքի վրա,  
 Ի՞նչ ունեք անբիծ երկնում հայրենի,  
 Ձեր տեղն է միայն շիրիմը մոռյալ:  
 Քանի կենդան ենք, չենք թողնի, իժեր,  
 Մեր օդն ու ջուրը դուք ապականեք, —  
 Ասաց, արձակեց կայծակների շերտ  
 Եվ բոցավառեց անգղներին նենգ:  
 Եվ նրանք կորան հրում ու ծխում  
 Եվ բեկորներով փլվեցին գետին,

Պիղծ սակորներն են նրանց դեռ նեխվում  
Մեր հողում; ափին մայր Վուզա գետի:

\* \* \*

Արծիվ օդաչուն մի օր էլ մենակ  
Ընկավ երամի մեջ ուրուրների,  
Նրանցից հնգին արավ փլատակ,  
Սակայն տուն դարձավ արյուն թեվերին, —  
Մահացավ, ինչպես արծիվն է մեռնում  
Իր հայրենական լեռան գազաթին,  
Հայացքը սուղած երկնքի հեռուն,  
Արաթեվ ճախրող իր ընկերներին:

## ԲԱԺԱՆՄԱՆ ԺԱՄԻՆ

Անշատման ժամ է, հրաժեշտի ժամ,  
Սիրաբը լալիս է, ինչպես նուրբ շուշան:

Ծովաչ աղջիկն է հեկեկում միգում,  
Յարը ձին հեծած ճակատ է մեկնում:

Վրնջում է ձին կայծակնասամբակ,  
Ասպանդակներն են փայլում շողարձակ:

Աղջիկը [թափով] սանձիցը բռնում,  
Զիռ ալեծուփ բաշն է համբուրում:

Ապա ասում է իր սիրած տղին,  
— Թող իմ փափազը զուգի քո ուղին:

Ուր էլ որ լինես, ինձ չմոռանաս,  
Կկոլես հանդուգն ու տուն կդառնաս:

Սրտիս ծալքերում սերգ հրածին,  
Կսպասեմ պայծառ քո վերադարձին:

Կսպասեմ, ինչպես կանաչ ուռենի՝  
Բուսած եղերքին հայրենի Դոնի:

Երբ մարտի դաշտում նայես երկնքին  
Եվ տեսնես աստղեր վառ ու քնքշազին,

Կհիշես, այն իմ աչքերն են ցուլուն,  
Նայում են երկնից քեզ սիրով խորունկ:

Նայում են տեսնեն՝ քանչեւ ես մարտնչում,  
Բանչեւ ես թշնամու ետեվից թռչում,

Սուրբ մխրճում նրա կուրծքը սեւ,  
Իմ արի հեծյալ, արշավասույր սեր:

Խոսում է աղջիկն, ազամա լալիս,  
Սրտի երկնքից անձրեւ է գալիս.

Կապույտների տակ վաղ լուսաբացի  
Տղան փարվում է իր նշանածին,

Գլուխը զրկում, արցունքը սրբում,  
Հաբուրում խարտյաշ գանգուրը ծփուն:

— Մի՛ լա իմ անուշ, քնքուշ ուսնի,  
Բուսած եղերքին հորդահոս Գոնի:

Կայծակե սրիս շողյունը վկա,  
Կկավեմ արի, ինչպես մի հսկա,

Հայրենի կովից երբ վերադառնամ,  
Հարսանիք կանենք և խնճույք գարնան,

Ե՛վ տոն կլինի, ե՛վ ուրախություն  
Կակաչի ձորում, շուշանի հովտում,—

Ասում է տղան ու ասպանդակում,  
Ձին քառատրոփ սուզվում է միզում:

Ձիու դոփյունը աղջկա սրտում  
Հնչում է ինչպես մի քայլերից թնդուն:

## ԴՈՆԻ ԵԶԵՐՔԻՆ

Բարդենին որպես կանաչ շատրվան  
Ցայտում էր դեպի եթերը մավի,  
Բարդենու շուքում գրկել էմ նրան  
Սիրով ու հրով հակինթ հարավի:

Նայել էմ նրա աչքերին լճյա  
Ու նրանց խորքում պատկերս տեսել,  
Խաղաղությունն էմ ես տեսել անչար  
Եվ երանությունն անտափ ու լուսե:

Նրա մազերը ինձ միշտ թվացին  
Ոսկեղեն խոտի բուրումնավետ լասս,  
Եվ համբույրների շաղով ցողեցի  
Եվ սիրուց լացի հույզով հողմասաստ:

Հովտի ծաղկունքը վկաններ եղան  
Մեր ուրախության արծաթաքրքիջ,  
Ինչպես խոտերին նստում է եղյամ,  
Այնպես մեր սրտին իջավ սերը ջինջ:

Եվ մենք երգվեցինք ալեծուփ Դոնին  
Ալեծուփ սիրով սիրելու իրար,  
Սիրո՞ աղամլին, սրտի աղամլին  
Երգ էր գվգվում բարդենու վրա:

Եվ ինձ թվում էր բարդենու շուքում  
Մարիան պիտի որդուս օրորի,  
Զքնաղ երազն էր թռչում իմ հողում  
Բոլոր գույներով խաղաղ օրերի:

\* \* \*

Ո՞ւր է Մարիան, ո՞ւր է սպիտակ  
Իմ ստանիցան, տունը հայրենի,  
Ողջը թաղեցին մոխիրների տակ  
Բարբարոսները նենդ ու վայրենի:

Ավերվեց այդին հայրենի, շքեղ,  
Որտեղ սոխակն էր քնքուշ կարկաչում,  
Եվ լուսնկան էր հանց պայծառ կանթեղ  
Ծառերի գլխով ցուլալով շրջում:

Արևերի բոցից արհավիրքային,  
Աճխացավ բարդին կանաչ շատրվան,  
Աղաճսիները թեկաթափ ընկան  
Լալով իմ սերը ջինջ, գարնանային:

Ո՞րտեղ է հանդչում աճյունդ փոքրիկ,  
Մարիան, իմ սեր մեռած, մոխրացած,  
Երգվում եմ ես քեզ, խոշտանգված քույրիկ,  
Երգվում եմ մեր սուրբ հողին կուացած,

Իմ սուրբ ես չեմ դնելու պատյան  
Քանի մեր հողում դեռ կա բորենի,  
Քանի նա ծարավ մահի ու արյան  
Ապականում է ափերն հայրենի:

Ես չեմ իջնելու նժույզիս թամբից,  
Մինչև իժերին չջնջենք խաղառ,

Վրեժ հնք ուխտել արդար ու անբիծ,  
Վրեժի հրգով դիր ինձ ճանապարհ:

Իմ սրտի հովտի քնքշազին շուշան,  
Թի իմ սրբազան ուխտը ես դրժեմ,—  
Սուրբ սերդ թող ինձ լինի անարժան,  
Թող ինձ նզովի մայր Դոնը վսեմ:

## ՄԻԱՅՆ ՔԵ ՀԱՂԹԵՔ

Հարսն ասես բուրդ չե, խաս ձյուն է գգում,  
Նանը քնքշությամբ իլիկ է մանում,  
Իլիկ է մանում, բարակ թեւ անում,  
Սպիտակ թեւից գուլպաներ հյուսում:

Հյուսում է, հյուսում ու մաքով թռչում  
Դեպի ճակատը՝ զրկում յոթ սարի.  
— Հարսիկս, երնեկ դառնայի թռչուն,  
Թռնեի մոտն իմ սիրած բալի:

Իմ զինվոր բալին զիրկս առնեի,  
Համբույր ցողեի ճակատին շիտակ,  
Իմ ձեռքով էս տաք գուլպան հագցնեի,  
Թեկուզ հանգչեի հետո ոտքի տակ:

Ախ, էնպես խորն եմ բալիս կարոտել,  
Կարծես չեմ տեսել ես հազար տարի,  
Գլխիս մազերը դարձան ճերմակ թեւ,—  
Ձյուների հյուսքեր սարի կատարին:

Բալես զրում է,— Անհող կաց, նանի,  
Գուլպաներ արն դասակիս համար.  
Նանը, կտրիճս, քո չարը տանի,  
Կանեմ, ութ ջուխտ չէ... հարյուր ու հազար:

Մենակ թե, բալեք, արի, արծվենի,  
Թաղեք աշխարհի չար մարդագայլին,  
Մի թողեք պղծի հողը հայրենի,  
Հաղթեք, տեր կացեք ձեր հանդ ու կալին:

Հաղթեք... Հաղթության կարմիր գարունքին  
Ինչպես ծիծառներ երամ առ երամ  
Շրթներըդ վրա երգ երանության  
Դարձեք, ձեր բույնը շենցրեք կրկին:

Ձեր վերագարձն են հաղթանակաբեր  
Փափագում, տենչում մայրեր բյուրավոր  
Եվ լուսաթաթախ հարսեր, մանուկներ,  
Նանիներ՝ բարի ու սրտահատոր:

Նանը խոսում է իրա սիրասուն  
Երազների հետ այնքան ցանկալի,  
Իլիկ է մանում, գուլպաներ հյուսում,  
Քնքշանքով ճամբում հեռավոր բալին:

Թող նա իր ըմբոստ ընկերներին հետ  
Հագնի, չմրսի ցրտում ու ձյունում,  
Ձենքով, զրահով փշրի թշնամու  
Ժանիքն՝ արյունի ծարավ, չարաղես:

## ՋՄԵՌԱՅԻՆ

Сыны снегов, сыны славян...

М. Ю. Лермонтов.

Ջյունը պատել է Ռուսաստանն արար,—  
Հյուսիս, արեւմուտք, հարավ, արեւելք,  
Ջյուների միջով առնջ ու առնջ,  
Ով Ստաւրինազուն զորքեր սրամերկ:

Ջյունի պես թափեք թշնամու գլխին  
Սրերի շանթեր, հրերի հեղեղ,  
Ոսոխը հողմ է ցանել ոխերիմ,  
Թող հիմա հնձի փոթորիկ անեղ:

Փռչեղեն ձյունի ամպերը նրան  
Մահու պատան են հյուսում սպիտակ,  
Ով թուր է հանել աշխարհի վրա  
Թրից ընկնում է, նեխվում ձյունի տակ:

Հարազատ ձյուներ, հարազատ ձմեռ,  
Ձեր արգանդներից ծնվում է անմեռ  
Գարունն անթառամ հաղթանակների,—  
Դնվք դափնեպսակ մեր բանակներին:

## ԱՐԻՈՒԹՅՈՒՆ

Հետախույզները ճանապարհ ընկան  
Անտառի միջով սիւս ձյունասքող,  
Երկնում ցուլում էր ձմռան լուսընկան,  
Մազերին առած մեզը որպես քող:  
Հետախույզները արահետներով  
Խրամատներին քնած թշնամու  
Մոտեցան անտես, լուիկ որպես հով,—  
Սյնպես անաղմուկ լուի ձյունն է մանվում:  
Հագած ձյունագույն զգեստ սպիտակ,  
Մերված ձյուներին խորին անտառի,  
Չննեցին նրանք ցատումով անտակ,  
Բանակավայրը բարբարոսների:  
Ապա խուլական վազրի ոստյունով  
Ցատկեցին հարբած պահակի վրա,  
Չազիր մուռթը ծեփեցին ձյունով  
Ու վայրկյանաբար փախցրին նրան:  
Լուռ, որպես ստվեր, կրկին հետ եկան  
Ծանոթ ձորակով, եզրով անտառի,  
Չիմացավ արթուն անտառը անգամ  
Ոնց վերագարձան կտրիճներն արի:  
Երբ լուսաբացին, ինչպես այրուձի,  
Թափով առյուծի սուրացին մերոնք,

Եվ հորդ հեղեղը արկերի բոցի  
Տեղաց թշնամու վրա անողսք,—  
Հետախույզների սրտերի միջով  
Ծփաց խնդության մի հախուռն ալիք,  
Խրոխտ զրոհի մըրբիկի շնչով  
Լեռնացավ նրանց կամքը անառիկ:  
—Մահ ճիվաղներին,—գոչեցին նրանք,  
Աչքներում կրակ՝ կռիվ սլացան,  
Խոսեցին մեկեն հրանոթ, նռնակ,  
Անխափան ահան, սվին, հրացան:  
Քանի հայրենի դաշտերի վրա  
Սողում է թեկուզ մի իժ հիալերյան,  
Մեր կուրծքը դարձրած վահան ու զրահ,  
Մենք վարելու ենք մարտ հայրենական,  
Որ դու, հայրենիք, մնաս լնյն, շքեղ,  
Անկապանք, ազատ և շռայլազմրդ  
Եվ կյանքդ հոսի որպես մի շքերթ  
Եվ ամպ չնստի դեմքին քո զվարթ:

## Գ Ր Ո Ն

Ստեպաների հողմերի պես սուշլ, թեթև,  
Արշավում են նժույգները սրաթեփ:

Նժույգների կուռ պայտերից հովիտում  
Բնց է ցայտում, թե աստղերն են կայծկլտում:

Երամ-երամ սլանում են մրրկաբաշ,  
Սմբակում են ոստխներին նենգ ու գարշ:

Մերկ սրերն են կազակների փայլփլում,  
Հանց կայծակներ փոթորկածին ամպերում:

Սուրբ վրեժը՝ նման անդուսպ թերեքին,  
Որոտում է կիրճերի մեջ մեր կրճքի:

Հեղեղվում են նման գարնան Կուրանի  
Ատելության հորձանքները ամենի:

Մենք թռչում ենք, քաջ թրատում թշնամուն,  
Գետին փռում ինչպես ոտերն ուռնու:

Ով մեր հողն է խուժել մթին գիշերով,  
Նա շանթվում է վրիժառու սրերով:

Ճաշակում են ոստխները ոխերիմ  
Կազակների ազամի քենը վաղեմի:

Ով վրդովեց խաղաղ Դոնը հայրենի,  
Նրա ափին տխուր շերիմ կզանի:

Խորշերի մեջ ավանդական մեր հողի  
Պիտի փտեն ոսկորները սոխի:

Իսկ զանգերից նրա լալրը, լըբենի  
Պիտի կանգնենք բուրգեր դշխեմ ու դժնի,

Որ ափերից Հոենոսի երբ նայեն  
Եզերքներին խորունկ Դոնի մեր վսեմ,—

Սարսեն, զողան հրեշները արյունառչա  
Եվ չսողան դեպ հողերը մեր հարուստ:

Քանի դեռ կա թեկուզ մի նեռ ախոյան,  
Մեր սրերը չենք դնելու մենք պատյան:

## ԼԵՆԻՆԻ ՏՈՒՆԸ

Ալեծուփ, խորունկ թեմզայի ափին,  
Մի բանվորական հին թաղամասի  
Խաղաղ անկյունում կեցած էր մի տուն,  
Ճակատի վրա անջինջ հուշագիր:  
Այն պարզ, հասարակ, անշուք տնակում,  
Որի դռը բակում ծփում էր մի ծառ՝  
Աշխարհի բոլոր ծառերի նման,—  
Անմահ Լենինն է բնակվել մի օր:  
Այն հին, աննշան, հեփին տնակում  
Նա է ապրել, նա, մեր մոլորակի  
Բնակիչների բնակիչը մեծ,  
Իմաստուն մարդը բոլոր դարերի:  
Նա այնտեղից է հայացքն արձվենի  
Սեփեռել բոլոր հորիզոններին,  
Բիլ հեռուներին, ուր բանվորական  
Բազմություններն են հորձանում անհուն:  
Նա այնտեղից է սփռել «Կայծ»-ը վառ,  
Որ հեռու վառվեց վիթխարի բոցով,  
Կիզեց սրտերը բանակներին հոծ  
Եվ մղեց արդար փոթորիկներին:  
Այն տունը հեռու եղավ ուխտավայր  
Ե՛վ անգլիական ածուխահատի,

Ե՛վ ամերիկյան անտառահատի,  
 Ե՛վ շոտլանդական շախտյորի համար:  
 Այնտեղից նրանք իրենց կարոտի  
 Լուսարձակները նետած լուրթ հեռուն,  
 Տեսնում են մի նոր Ավետյաց երկիր,  
 Երջանկությունն է ուր թագավորում:  
 — Ավետյաց երկիր, Լենինյան երկիր,  
 Ծովերից հեռու, մովերից հեռու,  
 Դու հրաշալուր մի երգի նման  
 Հնչում ես ամբողջ աշխարհագնդում:  
 Այն փոքրիկ տունը՝ փոքրիկ տանիքով  
 Կարծես աշխարհն էր իր մեջ ամփոփում  
 Այն կապույտ ափում, ուր մառախուղի  
 Պատյանն է Թեմզան թուրը մխրճում:  
 Այն փոքրիկ տունը՝ սրբություն էր մի  
 Կոմունիստ շախտոյր Սեդնեի համար,  
 Նա պարծանքով էր հսկում, պաշտպանում  
 Մեծ առաջնորդի այն տունը փոքրիկ:  
 Ֆաշիստ ցինների երամը զարհուր  
 Քանի՛ թաղամաս արավ փլատակ,  
 Մոխրահույտերը շիրիմներ եղան  
 Խաղաղ Լոնդոնի բյուրավոր մարդկանց:  
 Դու էլ մահացար, իմ անգլիացի  
 Հարազատ եղբայր, անձնվեր Սեդնեյ,  
 Քո պաշտած տունն էլ դարձավ ավերակ,  
 Ննջի՛ր սրբազան մոխիրների տակ:  
 Ննջի՛ր, հավատա, տունը Լենինի  
 Կա ու կմնա հար ու հավիտյան,  
 Լենինի տունը տիեզերքն է անձիր,  
 Մայր ցամաքները, ծովերը բոլոր,

Հանքերը բոլոր, հանդերը բոլոր,  
 Նավարանները բյուր քաղաքների,  
 Հողերը բոլոր, գյուղերը բոլոր,  
 Հյուղերը բոլոր տառապող մարդկանց:  
 Լենինի տունը հյուղն է բանվորի,  
 Խրճիթն է հանքի ու հանդի որդու,  
 Ծովեր ահոսող նավեր, լաստերն են  
 Ծովայինների ու ձկնորսների:  
 Լենինի տունը այն վրաններն են,  
 Որ հովիվները զարկել են սարում,  
 Կամ դալար հովտում, կամ անապատում,  
 Կամ եղերքներին ալեսասա ծովի:  
 Լենինի տունը աշխարհն է արար...  
 Թեմզայից մինչև Նեվան հայրենի,  
 Գանգեսից մինչև ջինջ Նիագարան,  
 Մինչ Հռենոսը տունն է Լենինի:  
 Հավերժական է տունը Լենինի,  
 Հանց լեռնապարը անհաս Պամիրի,  
 Հանց գահույքները ծեր Տյանշանի,  
 Հանց բարձունքները Մասսի աստղամերձ:  
 Լենինի տունը—սրբություն սրբոց  
 Մեր սովետական հայրենիքն է լայն,  
 Մեր փոթորկալիճ ստեպներն են լայն  
 Եվ հովիտները մեր ձյունասավան:  
 Արյան, ավերի մոլուցքով հարբած  
 Թշնամուն այստեղ զալարի պիտի  
 Մահվան արհավիրքն անխուսափելի,—  
 Մահվան մրրիկն անեղ, խուլաթափ:  
 Ով իմ լոնդոնցի նահատակ եղբայր,  
 Մենք երգումների երգում ենք տվել՝

Մեր կրճքով, կյանքով, ավյունով, արյամբ  
Պաշտպանել տունը անմահ Լենինի,  
Որ տունն է բոլոր տառապածների,  
Բոլոր ազգերի՝ գերված, անպատված,  
Բոլոր ցեղերի ազատակարոտ,  
Բոլոր զնդերի ելած զրոհի:

## Փ Ր Կ Ա Ր Ա Ր Ը

Ողջ մարդկութեան բազմադարյան անտառում,  
Նոր հոների տապարների զարկի տակ,  
Տապալվեցին, իբրև ծառեր դալարուն,  
Ժողովուրդներ, պետութիւններ բովանդակ:

Ե՛վ Ֆրանսիան, և՛ Նորվեգիան, և՛ Դանիան,  
Ե՛վ օրբանը Հոմերոսի մայրենի,  
Ե՛վ կաթնահորդ Բելգիան ընկան ծով արյան,  
Սովի երախս-վիշապական ու դժնի:

Ողջ աշխարհում սովերներն են երերվում  
Բյուր մայրերի, մանուկների ումբահար,  
Հեզ որբերի երամներն են թափառում,  
Անաղաստան և սովահար, ցրտահար:

Մեռելների դիակների քարվանին  
Սեվ ցիներն են իջնում անեղ կռինչով,  
Ե՛վ բուերն են վայում, գտած հովանի  
Ալիբրակաց մոխիրներում մառ, անթով:

Ո՞վ կհանի այս եղևնի դժոխքից  
Քեզ, մարդկութիւն՝ ոտնահարված, անսլատված,  
Ո՞վ կամոքի ե՛վ ցավ, ե՛վ վերք, ե՛վ կսկիծ,  
Ո՞վ ուժ կտա քո ուժերին ջլատված:—

Ստալինը, դու լսում ես մարդկություն,  
Նա քո սիրտն է, քո ուղեղն է հանճարեղ,  
Նա բերում է հավերժական փրկություն  
Նգերքներին ուճակործան, արնահեղ:

Նրա անունն անապական շուրթերին  
Կայծակվում է կարմիր զորքը գերազոր,  
Ծածանվում են նման հսկա վարդերի  
Դրոշները մեր փրկարար ու բոսոր:

## ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Կարմիրը անակոյի մենք եւ կարմիր-  
նավատորմայիններ, հրամանատարներ  
եւ քաղաշխատողներ, պարտիզաններ  
եւ պարտիզանուհիներ: Ձեզ է նայում  
ամբողջ աշխարհը, որպէս այնպիսի ուժի  
վրա, որն ընդունակ է ոչնչացնելու գեր-  
մանական զավթիչների թալանչիական  
հրոսակախմբերին: Ձեզ են նայում գեր-  
մանական զավթիչների լծի տակ ընկած  
Եվրոպայի ստրկացված ժողովուրդները,  
որպէս իրենց ազատարարների վրա:  
Ձեզ բաժին է ընկել մեծ ազատագրա-  
կան միսիա: Ուրեմն, արժանի եղեք այդ  
միսիային»:

Ի. Վ. ՍՍԼԻՆ

(1941 թվականի նոյեմբերի 7-ին  
Մոսկվայի Կարմիր հրապարակում տեղի  
ունեցած Կարմիր Բանակի զորահանդե-  
սում արտասանած ծառից):

Իմ սովետական ժողովուրդ պայծառ,  
Պայծառ կմնա արար աշխարհում  
Անունդ, որպէս գարնան ծիածան,  
Գարնան արեգակ լույսով զարդարուն:

Բոլոր ազգերը հաղթութեան պսակ  
Կդնեն ճակտին քո մրրկածեծ,  
Դու քո արյունով փրկութեան լուսայգ  
Կվառես քանի՜ երկրում մահամերձ:

Դու քո արյունով կփրկես բազում  
ժողովուրդների տանջված, տառապած,  
Ում հավերժական մահն է սպասում,—  
Դու վերածնունդ կտաս փառապանծ:

Քո հայրենիքը դարձավ ուխտավայր  
Լույս ազատութեան մարտիրոսների,  
Ձի թառամելու անմար, աստղավառ  
Հիշատակն ընկած քո հերոսների:

Դու արդարախոս զայրույթով խորունկ,  
Կեցած քառուղում մահու և կյանքի,  
Վիշապ ոտխին շիրիմ ես փորում,—  
Նրա վտառներն առնում կրակի:

Ռազմի բոցերում արհավիրքային,  
Օ՛, չի ընկճվում ոգիդ ժայռակուռ,  
Մարմնիդ վրա վարդեր վերքերի,  
Բացում ես զալիք կյանքի ոսկե դուռ:

Քեզ հաղթանակի տոնախմբութեան  
Սաղաղ ծովերով, եթերով խաղաղ  
Հյուր կժամանեն ընկեր, բարեկամ,  
Կբացես սեղան եվ ճոխ, եվ ուրախ:

Եվ շրջան կառնեն թասեր ցնծութեան,  
Ծփուն հայրենի փրփրան զինով,  
Կհիշես պատվով,—բերկրանքը իմ տան  
Ես պաշտպանեցի իմ արյան զնով:

## ՀԱՎԵՐԺ

Այս օրերին աղետավոր, ահավոր,  
Միբա իմ, դու միշտ սավառնում ես Մոսկվայում,  
Գրկախառնվում, եղբայրորեն փայփայում  
Քո մարտական ընկերներին բյուրավոր:

Սուրբ ոստանի մատույցներում գրանիտ  
Հայրենիքի փառքն են նրանք պաշտպանում,  
Բորք հրերի հորձանքներով կործանում  
Ոսոխներին վայրի, վայրագ, ոճրամիտ:

Հրեշները չեն քայլի լույս քաղաքով,  
Չեն տեսնի վեհ պարիսպները Կրեմլի,  
Մենք չենք թողնի նրանք խուժեն խինդով և  
Փողոցներդ, Մոսկվա, դու մայր հողեթով:

Դու օրորոց Հոկտեմբերյան Մըրիկի,  
Դու Լենինի, դու Ստալինի դարձնոց...  
Լսիր, Կարմիր հրապարակ, ոչ մի օձ  
Մենք չենք թողնի սրբապղծի քեզ, Ալի:

Հավերժ պիտի կուրանտները Կրեմլյան  
Միջազգային մեր սուրբ հիմնը հնչեցնեն,  
Քո լայներում գեղեցկանիստ ու վսեմ,—  
Միշտ պիտ բուրի ազատությունն անսահման:

Փոտեմարտում այս բախտորոշ, վճռական,  
Միրա իմ, երգ իմ, ձեր բախտն էլ է վճռվում,  
Ռազմիկներ եք դուք էլ ահեղ այս կովում,  
Այս կովից է կախված ձեր կյանքն, ապագան:

Մարտնչեցեք դուք ձեր ջանել ավյունով,  
Ձեր արյունով, ձեր անունով, ձեր ուժով,  
Անցեք մարտի մղձավանջով ու մուժով,  
Հաղթանակի լեռը ելեք երկնամով:

Մահվան վիհը մնն անարդ թշնամուն,  
Սվիններից մեր դալարվի նա պարտված,  
Ողջ մարդկության աչքի առջև անպատված,  
Մոսկվայի տակ նա իր մահն է որոնում:

## ԳՈՒՍԱՆԱԿԱՆ

Հայոց լուսաղբյուր, քաղցրալուր լեզվով  
Երգում եմ, մուսան, ազատ, անկաշկանդ,  
Երգա հնչում է վտակներով զով,  
Ծփում սրտից սիրտ, թռչում հանդից հանդ:

Իմ երգի առաջ բնոց են ընդարձակ  
Պարտեզները պերճ՝ մրգերով զեղուն,  
Ծաղկանոցները՝ բույրերով անհագ,  
Ծառաստանները՝ դալար, փողփողուն:

Երգիս օրրանն են աղամանդազահ  
Լեռները, սուզված զոհար ամպերում,  
Ես մի երգիչ եմ, բարձունքի արքա,  
Իմն է հայրենի անսահման հեռուն:

Լազուր լեռներում արեգակամերձ  
Ծնվեցի, եղա պատանի հովիվ,  
Բայց ինձ սուրբ շուրթով կոչիր բանաստեղծ,  
Զոնեցիր երգեր նուրբ, նման հովի:

Եվ պատգամեցիր.— բովանդակ սրտով  
Երգիր լեռների աշխարհն անտրտում,  
Դաշտերը անդորր, զետերն անվրդով,  
Ե՛վ երանություն, և՛ աղատություն:

Եվ ես երգեցի, և երագեցի  
Կույս գազաթները անմահ արվեստի,  
Եվ ինձ թե՛վ ավեց մեծ շիրակեցին  
Մեծությամբ իրա անեղերք սրտի:

Ես Մուսի սարի փեշերին անհաս  
Զրույց արեցի ծաղիկների հետ,  
Եվ ասողերի հետ՝ լուսեղեն երագ,  
Եվ Հայնեի հետ հարազատ հավետ:

Մեր հնձաններում շրջեցի խինդով  
Շքեղ շողքի հետ արև Պուշկինի,  
Միրզա Շաֆու հետ խորունկ դավաթով  
Խմեցի հայոց հրաբոց գինի:

Երկիր, աշխարհ լույս աղբյուրների  
Թագունիներն են աղբյուրները քո,  
Եվ թավալվում են ջրինջ, սքանչելի  
Հոգուս անտառով, հովտով, ձորակով:

Ո՞վ է մոլեգնում զալ թույնը թափել  
Կույս աղբյուրներից անապակ ակնում,  
Ո՞վ է մոլեգնում վայրագ՝ կոտորել  
Լույս մանուկներին երգերիս բերկրուն:

Ո՞վ է սպառնում զալ՝ բանաստեղծի  
Դափնե պսակը փոշում տրորել,  
Ո՞վ է սպառնում քո բանաստեղծին  
Կախազան հանել, գերեզման փորել:

Ո՞վ է մարմաջում մեզ թաղել կենդան,  
Ինչպես թաղեցին հայրենաբարբառ  
Սխամանթոյին մարտիրոսական  
Եվ Վարուժանին մարգարտաքնար:

Մեր հողն անարգող դժնի դահիճներ,  
Վայրագ հեռնորդներ արնոտ Աթիլի,  
Դուք թունաթաթալ խայթող կարիճներ՝  
Հավետ դարշելի, հավետ ատելի:

Դուք կարորվեք կրունկների տակ  
Մեր սպառազեն, զրահապատ ուժի,  
Կանապականա օղը թունահազ,  
Չենք թողնի կյանքում անգամ մի փոշի

Ձեր հորդաներից հազարահեղեղ,  
Դուք թշնամիներ դուրության, երզի,  
Դուք թշնամիներ քնարի լուսեղ,  
Դուք հալածողներ հանճարեղ մտքի:

Վայրի ոսոխներ գիտության, լույսի,  
Դուք եք սեվաբոց խարույկի հանել  
Անթոշ երկերը Գյոթեի, Մարքսի,  
Շոպեն Երվերի, Եելլի անմեռ:

Սարուկներ Հիալեր ավերակիչի,  
Դուք վանդալորեն ավերակեցիք  
Հեքիաթ Հայնեի, մեծ Միցկևիվիչի  
Հուշարձանները վսեմ, ղեղեցիկ:

Խավարամոլներ դաժան, դժնաքայլ,  
Քանի ոստաններ արիք փլածակ,  
Աշխարհն ուղում եք առնել ձեր մռայլ,  
Սև խարույկների կամարների տակ:

Բայց մառ բոցերում ձեր հրդեհների  
Ինքներդ պիտի վառվեք, մոխրանաք,

Կտեսնեք ծուխը ձեր ոսկորների,  
Սակայն չեք տեսնի երբեք հաղթանակ:

Մերն է լինելու հաղթության հեռուն  
Եվ ազատության պարտեզն անթառամ,  
Ինչ երազել ենք մեր երազներում,  
Կառուցել, կերտել մեր կյանքի գարնան:

Ամենը, ինչ որ բանաստեղծեցինք  
Հավատով, խինդով, հոգու թրթիռով,  
Ինչ քնարեցինք անխառ, անկեղծիք  
Վտակակարկաչ մեր քնարներով:

Արյունով արբշիռ ճիվաղներ մուսյւ  
Ձեր մագիլն արնոտ չենք թողնի դնեք  
Մեր արդարախոս գրքերի վրա,  
Երգերի վրա լենինյան, արեգ:

Ձեռք թողի պղծեք անբիծ արվեստի  
Տաճարն հոյադուռ ու հրաշավիմ,  
Բյուր գուսան, նման սեզ էվերեստին՝  
Ահա կանգնել են նրան աղավեն:

Սուր են սրերը մեր բոց երգերի,  
Ինչպես քաջ Դավթի թուրը հինավուրց,  
Ինչպես ահարկու կայծակների խուրձ  
Ճայթում են լպիրշ ձեր ճակատներին:

Մրրիկն է պայթում ժողովուրդների  
Եվ գուսանների վրեժը՝ որոտ,  
Ձեզ սպասում է մեզ շիրիմների,  
Մեզ՝ երջանկության լուսեղ առավոտ:

## ԱՆՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Գմբեթները աստղազուլուխ Կրեմլի  
Նիզակում են ոլորտները վերըստին  
Եվ վերըստին կուրանտները թնդալի  
Հնչեցնում են հզոր հիմնը մեր սրտի:

Նորից ահա դու ազատ ես, անառիկ,  
Մոսկվա, Մոսկվա, ազատության օրորան,  
Եվ Ստալինի կուռ ձեռքումն է բանալիդ  
Եվ կեցած ես անպարտելի, անվարան:

Չապանվյան սուր սրերն են կայծակվում,  
Նժույզները փոթորկվում են խենթությամբ,  
Սկավել է մի վիթխարի հարձակում,  
Հեռ է քշվում ոստին, ինչպես մթին ամպ:

Տրորում ես ոտքերիդ տակ երկաթե  
Բազմազուլուխ, աշխարհակուռ վիշապին,  
Հերկուլես ես, երկիր, նրան թրատե,  
Շանթե, նետե խորքը մահվան վիրապի:

Ով քո հողն է կոխել, հող էլ պիտ դառնա,  
Իմ հայրենիք, զրահակուրծք դյուցազուն,  
Մահ է ուղում, թշնամին մահ կստանա,  
Քեզ հաղթության դարունհեր են սպասում:

Նորից պիտի մանուշակներ խնդության  
Բուրեն թուր քո ավերում, հայրենիք,  
Նորից պիտի քեզ հեռ նստեն լայն սեղան  
Գո ուստրերը ու դուստրերը ուզմիկ:

Նրանք քո լույս հաղթանակի վարունքին  
Երամներով հավքերի տուն կգառնան  
Եվ կավետեն ուրախություն աշխարքին,  
Եվ կզուգեն քեզ նոր փառքով անթառամ:

Փնռք քո որդոց սվինների շողունին,  
Շառաչյունին քո արկերի հազար փնռք,  
Փնռք արեգակ Ստալինի անունին,—  
Նա պողպատ է, երգ է, դրոշ, հաղթանակ:

## Գ Ա Ն Գ Ը

Հին արեվելքի մի հին աշխարքում  
Կար մի թագավոր անկուշտ ու ազահ,  
Բազմություններ էր անդուլ խոշտանգում,  
Նրանց դանակերից կանգնում իրեն դահ:

Մորեխի նման նա զորքերով հոծ  
Խժուռում էր օտար արտեր հարեվան,  
Լափում էր օտար հասկերն իբրեւ բոց  
Ու մոխիր մաղում դաշտերի վրա:

Օտար քաղաքներ շեն ու հոյակերտ  
Ավերում էր նա, անվերջ ավարում,  
Շքեղ շենքերը դարձնում խավար բերդ,  
Ընկղմում մթին, ահեղ խավարում:

Ուր ներխուժում էր խուժղուժ, խաժամուժ  
Բանակը նրա նման խուժանի,  
Այնտեղ փռվում էր մահու մեզ ու մուժ,  
Տոչորում, այրում թուփը շուշանի:

Մարի ջինջ օդն էր լինում ապական,  
Թույնի էր փոխվում բույրը ծաղկունանց,  
Ժողովուրդների ներկան, ապադան,  
Կորչում էր մի պահ մութի մեջ անանց:

Նախճիր ու ոճիր, չարիք ու կարիք  
Թագավորում էր այդ թագավորի  
Ետեվից, իբրեւ աղետ, արհավիրք,  
Իբրեւ մղձավանջ, տանջանք բոլորի:

Ոսկին էր ընտրել թագավորն այդ մաս  
Թագ արքայական, զահույք արքենի,  
— Աշխարհում ինչքան ոսկի անհամար,  
Աշխարհում միայն իմը պիտ լինի:

Աշխարհում ինչքան գոհար կա անգին,  
Ինչքան հուր հակինթ պիտի միմիայն  
Հյուսվեն թելերին իմ շվայտ կյանքի  
Եվ ապարանքիս շուք տան անսահման:

Տիեզերքի վրա, ազգերի վրա,  
Ինչպես ավազը անապատներում,  
Իմ գորքը պիտի տիրակալ մնա,  
Թուրս շանթի պես դաժան, աններում:

Այսպես թրի տակ քաշեց նա բազում  
Ժողովուրդներ, հայրենիքներ,  
Բայց երբ ևս մարել դու, արդար ցասում  
Ազատակարոս ազգություններ:

Դու ոտնահարված ազգերի սրախց  
Պայթեցիր ինչպես փոթորիկ ծովում,  
Ինչպես կայծակն է ճայթում կապույտից,  
Ճայթեցիր զլիսին իժի նզովուն:

Եվ գոռոզ արքան զորքերով խառնակ  
Ընկավ վիհերը վրեժի վսեմ,

Ըմբոստ ազգերի դարձապարի տակ  
Գտավ իր մահը գշխեմ ու նսեմ:

Իմաստունները բոլոր ազգերի  
Նեո թագավորի ամբոցը եկան,  
Ճամբով բյուրավոր քարավանների  
Բազմությունները հանց բոցը եկան:

Եկան բորենի էն բռնակալի  
Արյունով օծված ապարանքի մոտ,  
Ծառացան նման գարնան ծովերի  
Փըրփըրակոհակ, ցասկոտ, փոթորկոտ:

Եկան արնահեղ պատերազմների,  
Կողոպուտների հրեշ—ճիվաղին  
Գերեզմանելու, իբրեւ գարշելի  
Լեշի զազրահատ, ժահրոտ, դիվային:

Ամբոխը, կարծես, վիթխարի մի մարդ,  
Գանգը արքայի իր ձեռքը առավ,  
Ասաց,— այս գանգը ստոր ու տմարդ,  
Ինչքան նենգություն աշխարհին բերավ:

Ինչքան նողկալի, խարդախ զառացանք,  
Ժայթքեց իժերի սեւ բույն՝ այս գանգից,  
Բերեց ազգերին սա ինչքան խոշտանգ,  
Տառապանք, անկում ու մահ ու կսկիծ:

Աշխարհի առաջ, արեւի առաջ  
Արքայի լեշը տանք անգղներին,  
Թուր կտուցներով թողեք անհառաջ  
Շուտ կտցահարեն բռնակալի դին,

Ինչպէս բոլորիս նա կայանարեց:  
Սակայն այս գանգը, անոթը մահի,  
Ի՞նչ անենք, ասեք, իմաստուններ մեծ,  
Գիտուններ բազում արար աշխարհի:

Այնժամ խոսք խոսեց մի մարդ ալեհեր,  
Միրուքը ճերմակ՝ ամպ միջոբի,  
Հայացքն արծվենի, աչքերը ջահեր,  
Լի իմաստութեամբ, խոհով դարերի:

— Հրերի ճարակ, սրերի ճարակ  
Եղած հրաշագան մեր ստանների  
Ոսկին ցոլում է հանց անմար կրակ  
Գանձարաններում շահի անուկի:

Անկուշտն աշխարհի, ազանն աշխարհի,  
Մեզ նետած կրակ վշտի, վտանգի,  
Արշավանքներով մառ ու նենգավի  
Ավարեց, մարդիկ, օ՛, ինչքան ոսկի:

Ճիվաղաբարո շահի գանգը մառ  
Բերենք մենք լցնենք իր գավթած ոսկով,  
Տեսնենք թե ինչքանն ոսկիներ պայծառ  
Կտանի գանգն այդ մոլագար, անթով:

Տեսնենք անոթն այդ լի ոճիրներով,  
Թունավոր թասն այդ մտքի լրբենի,  
Որ զառանցում էր ոսկի տենչալով,  
Ինչքանն ոսկիներ պիտի ներս առնի:

Անասլով խոսքը ծեր իմաստունի,  
Ալեկոծվեցավ ամբոխը օվկիանի,

—Ա՛ն քեզ բանալին մե՛ծ գանձարանի,  
Ան քեզ և գանգը, ծերո՛ւկ աննման:

Ծերուկը առաջ ու շարժվեց առաջ,  
Ամբոխն էլ ծփաց ծուփով օվկիանի.  
Ծերուկը համակ ժրություն դառած  
Բացեց դարպասը ծով գանձարանի:

Հանկարծ հանց արեւ՝ ճառագայթարձակ,  
Անհատում ոսկին ցոլցւաց փայլով,  
Բուռ առ բուռ լցրեց ոսկին այդ շողակ  
Արքայի գանգը խավար ու անթով:

Սակայն, օ՛, հրաշք... ինչքան լցնում էր,  
Մնում էր գանգը վերստին թափուր,  
Ծերուկը արմանում ու զարզանդում էր,  
Ու նոր ոսկիներ թափում լիարուռ:

Հեզ ալիվորը զուր էր ճիգ անում,  
Գանգն առաջվա պես մնում էր դատարկ,  
Ինչպես ջրհորը հին Բաբելոնում,  
Որ երկնքի պես խոր էր, անհատակ:

Ծով գանձարանի ոսկին բովանդակ  
Անկուշտ երախն էր առել գանգը սեւ,  
Լցրեցին նաև հակինթ ու սուտակ,  
Հակինթն էլ հատալ, գոհարն էլ լուսե...

Թափուր էր էլի գանգը ահուկի  
Այն զարհուրելի ազահ արքայի,  
Ասես թե լիներ մթին դարերի  
Բերան ամեհի կամ բերան մահի:

Քարացավ մի պահ բազմութիւնը ծով  
Այդ տեսարանից զարմանահրաշ,  
Ու հողին լցվեց անեծքի բոցով.  
— Նզովք ազահին՝ զարշ, ստորաքարշ:

Այդ ոսկիներից շողուն, փայլազուն,  
Արյունն է ծորում ժողովուրդներին,  
Բյուրավոր մարդկանց քրտինքն է հոսում,  
Արցունքներին հետ անթիւ մայրերին:

Այդժամ ճեղքելով ալիքն ամբոխի  
Ասպարեզ եկավ մի ծերուկ մշակ.  
— Ով ժողովուրդներ, ես մարդ եմ հողի,  
Ես հողի հետ եմ խոսել շարունակ:

Բերենք մենք հողով լցնենք արքայի  
Գանգը ամենի.— առաց, բաց արավ  
Հողով լի փեշը իրա կապայի.—  
Գանգը երկու բուռ հող հազիւ տարավ:

Հողի մշակի իմաստութիւնից  
Թեւթուիչք առած ամբոխը խընդաց,  
Գերեզման նետեց շահի գանգը պիղծ  
Ու խաղաղության հովիտը զնաց:

## ՈՍՏ ԲԱՐԴԵՆՈՒ

Հնում մի հայոց հայանի գուսան  
Հեռու Ասորիք քշվեց աքսոր,  
Քանզի չէր հաճել նրա մուսան  
Գովել արքային գուռոզ ու զոռ:  
Աքսոր մեկնելուց առաջ բոլոր  
Վայրերը մանկութ շրջեց ոտով,  
Նա վերջին անգամ աչքով մոլոր  
Նայեց հայրենի լեռներին թով:  
Ամեն աղբյուրից ու զետակից  
Մի ափ ջուր խմեց ու շնջաց.  
— Հեյ, մնաք բարով իմ սրտակից  
Ջրեր՝ գլզլան ու սրընթաց:  
Իմ մոր կաթի պես անուշ եք դուք,  
Իմ մոր կաթի հետ ինձ սնեցիք,  
Ես հասակ առա ոնց գովաշուք  
Բարգենին ափին ձեր գեղեցիկ:  
Ուր էլ ես լինեմ՝ ձեզ կհիշեմ,  
Ուր լինեմ ես ձեզ չեմ մոռանա,  
Իմ վիհի նման դուք էլ վսեմ  
Տաղեր եք տաղում անխառ, անշահ:  
Այսօր դնում եմ աքսոր, սակայն  
Ձեզ այցի կգամ, երբ կարկաչի

Արդարությունը անապական՝  
 Ձեզ պես աղբյուրներ լուսնակաջինջ:  
 Ապա նա վինը թեվի տակին  
 Նստեց հով շուքում կանաչ թիփի,  
 Նայեց ու ասաց մանուշակին.  
 —Իմ հայրենական գիտի ափի,  
 Այ նխշուն հարսիկ, ալեվորիս  
 Մտահան չանես, չմոռանաս,  
 Այցելելու եմ ես քեզ նորից,  
 Երբ արդարությունն՝ անուշ երազ  
 Քեզ նման օնուշ հոտ արձակի  
 Հայոց դաշտերում, ոստաններում:  
 Ապա համբուրեց մանուշակի  
 Կանաչ ոտքերը, լացեց տրտում:  
 Եկավ հովիկը քնքուշ ձեռքով  
 Սրբեց արցունքը ձեռ գուտանի  
 Ու աղբյուրակի խաս եզերքով  
 Շուկավից անտառն իր մայրենի:  
 Ելավ երգիչը՝ մտնի անտառ,  
 Ծանոթ ծառերին իրա վերջին  
 Հրաժեշտն ասի սրտիցն անբառ,—  
 Հանդիպեց խայթող մի եղինջի:  
 Եղինջը նրա ոտքը խածնեց,  
 Նման կարիճի մի թունազեղ,  
 Եվ այսպես խոսեց երգիչը մեծ  
 Իր սրտի խորքից արդար, լուսեղ:  
 —Դու խածնիւր ոտքս, խղճուկ եղինջ:  
 Արքայի նման այն աղիրատ,  
 Որ մեր լեռների օդն անեղծ, ջինջ,  
 Ապականում է վարքով արատ:

Քամուս է ոամիկ ժողովրդի  
 Վերջին վաստակը, հաիշտակում,  
 Ժողված բոլորքը իր տմարդի  
 Նախարարներին: Նա ցոփ, անքուն  
 Խրախճանքներում վատնում է ողջ  
 Գանձերը, գույքը Հայաստանի,  
 Հայ աղջիկներին գարնան բողբոջ  
 Պոկում, ձոնում է պարսից շահին:  
 Եվ պահանջում է այդ եղկելին,  
 Որ իմ սուրբ վինը արդարախոս,  
 Լուս անցնի կողքով իր մեղքերի  
 Եվ փառարանի գահույքը գոս  
 Եվ խարազանը իր եղինջյա,  
 Որ մեր հեզ ազգի մերկ կողերին,  
 Մերկ մեջքի վրա անգութ իջավ,  
 Եվ ցայտեց արյան հուր շիթերի  
 Ճողեր բյուրավոր: Անգութ արքան,  
 Քո հրամանով դաժան, դժնի  
 Օտար հող կերթամ, բայց չեմ իջնի  
 Քո առջեվ ծունկի ոչ մի անգամ:  
 Օտար հողում էլ չեմ գադարի  
 Նզովել ես քո ծնունդը պիղծ,  
 Պարսավել վարքը անարդարիդ,  
 Թեկուզ գայլի պես հոշոտես ինձ:  
 Այսպես գուսանը սրտի խորքում  
 Խոսում էր խռով ու վրդովուն,  
 Արդարությունն էր խրոխտ երգում  
 Նրա խոսքերով ազնիվ, թովուն:  
 Մտքերով տարված անցավ մարի  
 Անտառով, հասավ մի բացատի,

Նայեց աչերին ջինջ ցողերի,  
 Իջած գորգերին զմբուխտ խոտի:  
 Նայեց ու ասավ.— Իմ արցունքին  
 Գուք շատ եք նման, շաղեր շողուն,  
 Ձեզանով լի է երգչի հոգին,  
 Նա ձեզ կպահի օտար հողում:—  
 Բացատից ելավ գուսանը հեզ,  
 Գնաց մայրական հյուղը, որի  
 Բակում կեցած էր մի սեզ, անթեք  
 Բարդենի կանաչ ու վիթխարի:  
 Բարդենու շուքում կանգնած էին  
 Բարեկամները իր հարազատ,  
 Աչքներում թախիծ, մորմոք մեկին  
 Աշնան ամուլի պես խոր, անփարատ:  
 Երգիչն ալեհեր բարեմ սվեց  
 Ու առավ նրանց բարեմն անուշ,  
 Իրեն մոտ վազող մանկանց գրկեց,  
 Համբուրեց նրանց աչքերը նուշ:  
 Ու առավ վինը ու նվազեց  
 Իր հրաժեշտի տաղը տխուր.—  
 —Հարազատներս, մնաք բարով,  
 Վշտով կմ ձեզնից ես բաժանվում,  
 Բարեկամներս, մնաք բարով,  
 Ինձ հետ ձեր հոգու ցամփն կմ տանում:  
 Հայրենական հյուղ, մնաս բարով,  
 Ինձ մայրենական օրրան եղար,  
 Բարդի բազմաճյուղ, մնաս բարով,  
 Չոր գլխիս կանաչ վրան եղար:  
 Իմ քնքուշ մերիկ, մնաս բարով,  
 Ես քո քնքշանքը չեմ մոռանա,

Իմ հոր զերեզման, մնաս բարով,  
 Ես քո օրհնանքը չեմ մոռանա:  
 Իմ դուռ ու դրկից, մնաք բարով,  
 Ձեր լավությունը չեմ մոռանա,  
 Անուշ կողակից, մնաս բարով,  
 Քո ջինջ անունը չեմ մոռանա:  
 Իմ գեղ, զեղացիք, մնաք բարով,  
 Ձեր արդար հացը չեմ մոռանա:  
 Իմ ազդ ոսմիկ, մնաս բարով,  
 Քո աչքի լացը չեմ մոռանա:  
 Ծերուկ գուսանը պղնձակուռ  
 Վինն էր նվագում, հեռն էլ երգում,  
 Ծերուկ բարզենին խշշում ախո՜ւտ,  
 Տրտում նվագն էր շարունակում:  
 Կարծես ասում էր բարդին կանաչ  
 Մի կանաչասիրտ եղբոր նման.  
 — Աքսորանք զնն դու անհառաչ,  
 Ես երգչ կերպեմ ամեն գարնան:  
 Տնեցիները բերին երգչին  
 Մի խուրջին, միջին ճամբի պարեն,  
 Լավաչ ու պանիր ու կանանչի.  
 — Գուսան, ի՞նչ նվեր մենք քեզ բերենք,—  
 Ասացին զեղցիք, երբ նա արդեն  
 Ցուպը, վինն առավ ճամփա ելավ՝  
 Շուրթերի վրա համբույրներ թեն՝  
 Հարազատների բարի ու լավ:  
 — Ի՞նչ նվեր բերենք, որ անթառամ  
 Հիշատակ լինի քեզ աքսորում:  
 Խոսք խոսեց այն ժամ մայրը զառամ  
 Աչքերում երկու արցունք ցուլն՝

Դողդոջուն ձեռքում բարդու մի տունկ.  
— Էս շյուզը, որդիս, առ քեզ նվեր,  
Էս շյուզի մեջ է սերը խորունկ  
Քո հոր, քո կնոջ, քո մոր անտեր:  
Ինչ աշխարհ երթաս, էն աշխարհում  
Կանկես շյուզը այս նորածիլ,  
Կդառնա նա քեզ ծառ դալարուն,  
Գլխին կնստի մի արագիլ:  
Էն արագիլը դու կհաշվես  
Քո մոր սուրբ հոգին, խոսնակ որդի,  
Իջած բարդենու գագաթին վես,  
Նա քեզ կարոտս կհաղորդի:  
Էն բարդենու տակ դու կհիշես  
Բարդենիներին քո հայրենի,  
Նրա շվաքում կնվազես,  
Զիլ ձենդ կգա, ինձ կհասնի:  
Մեն մի փետուրը արագիլի  
Կհաշվես անուշ մի բարեկամ,  
Մեն մի տերեվը բարդի ծառի  
Կհաշվես քնքուշ մի հարեվան:  
Էսպես հեզ մայրը ջահել որդուն  
Ինչպես մի հավքի հեզ, տարագիր,  
Ճանապարհ դրեց հեռու երկիր,  
Հեռու աքսորանք, պանդխտություն:  
Կատարվեց կամքը չար արքայի,  
Որ կրքերի մեջ շվայտ, տարփուն  
Ու խնճույքներում արբշիւ արբում,  
Վատնում էր գանձը Հայաստանի:  
Պարագանի տակ նրա հեծում,  
Տնքում էր ուսիկ մի ժողովուրդ:

Որ չութ էր շինում, գութան լծում,  
 Հերկում ու բերքում հողերը կորթ,  
 Իրիկունները հյուղերում մութ  
 Պատմում զբույցներ գուսանական՝  
 Լի բմբոստությամբ, հուշով անսուտ  
 Իր կռիվների հերոսական:  
 Վշտի ժամին էլ թախծում էր նա  
 Գուսանի նման երիտասարդ,  
 Որ օտար գետի ափին ամա,  
 Ապրում էր պանդուխտ օբերն անգարդ:  
 Տնկել էր այնտեղ նա մայրենի  
 Բարդենու տունկը, ջրել անգուլ,  
 Շյուղը դարձել էր մի գեղանի  
 Ու գեղուղեշ ծառ հովերով սույլ:  
 Անձանոթ վայրում ծառը այդ պերճ  
 Իրեն և՛ տուն էր, և՛ հայրենիք,  
 Նրա ճյուղերի սոսափի մեջ  
 Լսում էր նա մոր ձայնը քաղցրիկ,  
 Որ ասես լիներ անուշ օրոր,  
 Որ նա լսել էր օրորոցում  
 Հեռավոր հրաշք հեքիաթ մի օր՝  
 Հայոց լեռների ծաղկանց ծոցում:  
 Ամեն մի ճյուղը թվում էր մի  
 Հարազատ ընկեր, մի բարեկամ,  
 Մի քաղցրիկ քուրիկ, մի հարեվան,  
 Մի անուշ ախպեր, մի սիրտ ջերմին:  
 Նա ցերեկները վինն ուսից կախ,  
 Շրջում էր գյուղերն օտարազգի,  
 Նվագում, երգում տաղեր շարմազ՝  
 Լի տառապանքով իր խեղճ ազգի:

Իրիկունները ասաղերի հետ  
 Զրույց անելով, գալիս էր նա  
 Ծվարում շուքում խաղաղավետ  
 Այն բարդու, կեցած ավի վրա:  
 Մի օր էր ճերմակ մի արագիլ  
 Թեվելով եկավ, իջավ բարդուն,  
 Ժողվեց չորուկ ճյուղք ու ցեխ, ու կիր,  
 Երգելով հյուսեց մի թուխիկ բուն:  
 — Իմ ազիզ մայրն է, — խոսեց սրտում  
 Գուսանը տրտում ու տարագիր, —  
 Դարձել է ճերմակ մի արագիլ,  
 Եկել է տեսնի պանդուխտ որդուն:  
 Ճերմակ արագիլ, անապակ մայր,  
 Մեր սարում կանաչ գարննն իջավ,  
 Ճերմակ արագիլ, իմ փափազ մայր,  
 Սարից իմ սիրած առննն իջավ:  
 Խոսնակ արագիլ, իմ հոր հյուղը  
 Մննում է, թե, ախ, վերան եղավ,  
 Խոսնակ արագիլ, իմ հոր գյուղը  
 Անցնով է, թե ցամլն երամ եղավ:  
 Գուսանը տաղով հարցում անում,  
 Նայում էր բարդու աստղատերեվ  
 Գաղաթին թառած այն քնքշանուրբ  
 Հյուր արագիլին ճերմակաթեվ:  
 Արագիլը մի անուրախ երգ  
 Գվզվում էր մեղմ, հուշիկ մնչում,  
 Դա մի թախիժ էր, խոր, անեղերք,  
 Պանդուխտի տաղ էր տխրահնչյուն:  
 — Մենիկ կմեռնեմ օտար երկրում,  
 Օտար մայրերը ինձ կթաղեն,

Օտար քույրերը հող կմաղնն  
Շիրիմի վրա իմ անանուն:  
Օտար մանուկներ, օտար հարսեր  
Խաղերս կերգեն հողիս վրա,  
Մերիկս երկրում կսարսռա,  
Կզգա, որ մարեց բալեն անմեր:  
Կանաչ աչքերով քուրիկ բարդի,  
Կարտասովես հողիս վրա թեքված,  
Կարտասովի քեզ հետ վինս բեկված  
Հառաչանքներով փշուր սրտի...

Անցան տարիներ բարդի ծառի  
Սաղարթների պես մրրկավար,  
Թախիծը նման ճանապարհի  
Գուսանի սրտում փռեց իր մառ  
Փռչին դեղնավուն: Անտես եկավ  
Ծերությունն՝ անկոչ մի այցելու,  
Երեսը դարձավ ճաքճաք կավ,  
Թուխիկ մաղերը ձյուն սարերու:  
Սակայն գուսանը իր անբաժան  
Վինը ուսից կախ լուռ դեզերում  
Հալեպում, ապա Դամասկոսում  
Հյուսում էր տաղեր գովքի արժան:  
Եվ նրա ծերուկ, անբախտ հոգին  
Ճխում էր մի պահ՝ խնդությամբ լի,  
Երբ հանդիպում էր օտարազգի  
Պատանիների, աղջիկների,  
Որ երգում էին իր հորինած  
Եղանակները, հայրեններն անխառ,  
Ընծայում իրեն դրամ ու հաց,

Ողջունում խոնարհ ու սիրաբար:  
Բայց խնդությունը այս աշխարհում  
Կարճատեղ է միշտ ու վաղանցուկ,  
Վշտի հեղեղը ձոր էր փորում  
Գուսանի սրտում տրտում, անձուկ:  
Մի աշնան օր էր, մուժտոս մի օր,  
Մունչաց խորշակն անառապի,  
Հովազների պես նա անավոր  
Արշավեց ավտով և՛ այն գետի,  
Որի եզերքին մարմնով շիտակ  
Կեցած էր բարդին հեզ գուսանի, —  
Սամումն ամենի ու դժնդակ,  
Խուլական թափով ժանտազժնի  
Ու ավազեղեն բյուր վահանով  
Զարկեց ճյուղերին բարդի ծառի,  
Պոկելով ոստեր կանաչամով,  
Նման թեվերի արագիլի:  
Բարդին սարսռաց, գուսանը ծեր  
Գետնափոր խուղում տնքաց անօգ,  
Կարծես թե կրծքին փրվեց մի լես,  
Խեղդում էր նրան մի խոր մորմոք:  
Խորշակը քանի գնաց, այնքան  
Մոլեզունեց հուժկու, ահագնացավ,  
Բռնեց բարդենու ճյուղքը երկայն,  
Պոկեց ճանկերով իր չարագավ:  
Իբրեվ մի թաթավ ավարն առավ  
Տարավ թաղելու գեղին փոշում,  
Գուսանը իրա հյուղում սառավ,  
Մեկը ձեռքերն է կարծես փշրում,  
Զարկեց կայծակն էլ հազարաթուր,

Բարդենին շանթված իջավ ծնկի,  
Տաղալվեց կրծքին դետի զարհուր  
Նման դյուցազնի վեհ հասակի  
Գուսանը նայեց աչքերով մառ  
Հայրենի ծառին կայծակնազարկ  
Ու վերջին ճիգով նա սխրաբար  
Նեավեց թաթավը սեվակոհակ:  
Բռնեց հարազատ ծառի ճյուղքից  
Իբրեւ ըստուկից մոտ ընկերոջ,  
Պագեց շուրթերով մահակսկիծ,  
Հանգավ շրերում անեղագոչ...



Յ Ա Ն Կ

Իմ ժողովրդի մարտի մատյանում . . . . .	3]
Ծա փոթորիկն եմ երգում փրկավետ . . . . .	4
Ռազմի շնար . . . . .	6
Բարի երթ . . . . .	8
Անժառ աչքիք . . . . .	10
Քելոսուսական դյուզակ . . . . .	12
Հայրենի ծառ . . . . .	14
Սլավոնական ստեղծանք . . . . .	16
Վերավարի երազը . . . . .	21
Դու ազատության ցույք հավասարիմ . . . . .	22
Հայրենասիրական . . . . .	25
Արծիվ օդաչուն . . . . .	27
Բաժանման ժամին . . . . .	31
Դոնի եղբրքին . . . . .	33
Միայն թե հաղթեք . . . . .	36
Զմեռային . . . . .	38
Արիություն . . . . .	39
Գրոհ . . . . .	41
Լենինի տունը . . . . .	43
Փրկարարը . . . . .	47
Մարդկության հայրենիքը . . . . .	49
Հավերժ . . . . .	51
Դուստնական . . . . .	53
Անօրաբառով յուն . . . . .	57
Գանգը . . . . .	59
Ոստ բարդենու . . . . .	65



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0046831

[154.]

A  $\frac{I}{9495}$

**АШОТ ГРАШИ**  
**МУБАРИЗ НӘҒМӘЛӘР**

(әрмәни дилиндә)

**АЗӘРНӘШР**  
**Баки—1942**